ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Ա. Ի. ԱԼԻԽԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԿԱՆ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱ
(ԵՐԵՎԱՆԻ ՖԻԶԻԿԱՅԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ)
ՀԻՄՆԱԴՐԱՄ

REPUBLIC OF ARMENIA

A. I. ALIKHANYAN NATIONAL
SCIENCE LABORATORY
(YEREVAN PHYSICS INSTITUTE)
FOUNDATION

0036 Երևան, Ալիխանյան եղբայրների 2, հեռ.(37410) 341 500, ֆաքս (37410) 349 392 • 2 Br. Alikhanyan str., 0036 Yerevan, tel.(37410) 341 500, fax. (37410) 349 392

N 01-14/237
23.06.2026թ.

«ԿԱՐՄԵ» ՍՊԸ-Ի
ՏՆՕՐԵՆ Ս. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻՆ
Հասցե՝ թ. Գավառ, Սայադյան փողոց 54,

Հարգելի պարոն Մարտիրոսյան

«Ա. Ի. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա» հիմնադրամի (այսուհետ՝ Հիմնադրամ) կարիքների համար կազմակերպված համակարգչային սարքավորումների և օժանդակ սարքերի ձեռքբերման ԱԱԳԼ-ԷԱՃԱՊՁԲ-25/56 ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) շրջանակներում 2-րդ, 5-րդ, 8-րդ, 13-րդ, 14-րդ, 15-րդ, 16-րդ, 18-րդ և 20-րդ չափաբաժինների մասով որպես ընտրված (հաղթող) մասնակից ճանաչված «ԿԱՐՄԵ» ՍՊԸ-ի (ՀՎՀՀ՝ 08427081, հեռ.՝ +37494654066, էլեկտրոնային փոստի հասցե՝ karme.buisness@gmail.com) հետ 20.02.2026թ.-ին կնքվել է ԱԱԳԼ-ԷԱՃԱՊՁԲ-25/56-6 ծածկագրով ապրանքների մատակարարման պայմանագիր (այսուհետ՝ Պայմանագիր), որի արժեքը կազմում է 4732990,4 (չորս միլիոն յոթ հարյուր երեսուներկու հազար ինը հարյուր իննսուն ՀՀ դրամ քառասուն լումա), իսկ պայմանագրի կատարման ժամկետը պայմանագրով և դրա անբաժանելի մաս կազմող համաձայնագրերով սահմանվել է պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից հաշված մինչև 40 օրացուցային օր:

Ինչպես գիտեք, «ԿԱՐՄԵ» ՍՊԸ-ի կողմից պայմանագրի գնման առարկա հանդիսացող 2-րդ, 5-րդ, 8-րդ, 13-րդ, 14-րդ և 16-րդ չափաբաժիններով նախատեսված ապրանքների մատակարարումը սահմանված ժամկետներում, ավելին՝ մինչ օրս, չի իրականացվել:

Հաշվի առնելով, որ 2-րդ, 5-րդ, 8-րդ, 13-րդ, 14-րդ և 16-րդ չափաբաժինների մասով պայմանագրով սահմանված մատակարարման ժամկետները խախտվել են՝ հիմք ընդունելով պայմանագրի 2.1.7 ենթակետը, սույնով ծանուցում ենք Ձեզ, որ Հիմնադրամի կողմից 23.06.2026թ.-ից ԱԱԳԼ-ԷԱՃԱՊՁԲ-25/56-6 ծածկագրով պայմանագիրը միակողմանիորեն լուծվել է:

Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածով սահմանված պահանջները՝ առաջարկում ենք սահմանված կարգով և ժամկետներում ապահովել նախատեսված վճարումների՝ այդ թվում, 2-րդ, 5-րդ, 8-րդ, 13-րդ, 14-րդ և 16-րդ չափաբաժինների մասով պայմանագրի կատարման ապահովման՝ 409841 չորս հարյուր ինը հազար ութ հարյուր քառասունմեկ ՀՀ դրամի չափով, և որակավորման ապահովման՝ 614761,5 վեց հարյուր տասնչորս հազար յոթ հարյուր վաթսունմեկ ՀՀ դրամ հիսուն լումայի չափով վճարների գանձումը Հիմնադրամին:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝
ՏՆՕՐԵՆ Գ. ՔԱՌՅԱՆ